Ստրասբուրգ, դեկտեմբերի 8, 2009թ.

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (CCJE)

ԿԱՐՇԻՔ ԹԻՎ 12 (2009)

ԵՎ

ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (CCPE)
ԿԱՐՇԻՔ ԹԻՎ 4 (2009)

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սույն կարծիքը, որը համատեղ ընդունվել է CCJE-ի և CCPE-ի կողմից, ներառում է.

- **«Բորդոյի հռչակագիր» կոչվող Հռչակագիրը**
- **Բացատրական գրություն**

ԲՈՐԴՈՅԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

«ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ»[1]

Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհուրդը (CCJE) և Եվրոպայի դատախազների խորհրդակցական խորհուրդը (CCPE), դատավորների և դատախազների միջև փոխհարաբերությունների մասին կարծիք տրամադրելու Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի խնդրանքին, համաձայնության են եկել հետևյալում.

1. Հասարակության շահերից է բխում, որ իրավունքի գերակայության սկզբունքը երաշխավորվի արդարադատության արդար, անաչառ և արդյունավետ իրականացմամբ: Պետական մեղադրողները և դատավորները պետք է վարույթի բոլոր փուլերում ապահովեն, որպեսզի երաշխավորվի անձի իրավունքներն ու ազատությունները և պաշտպանվի հանրային կարգը: Սա ընդհանուր հարգանք է պատասխանողների ու տուժողների իրավունքների նկատմամբ: Քրեական հետապնդումից հրաժարվելու դատախազի որոշումը պետք է բաց լինի դատական հսկողության համար: Մի տարբերակ կարող է լինել, որը տուժողին հնարավորություն կտա քրեական գործն անմիջական/ուղղակի ուղարկել դատարան:

2. Արդարադատության արդար իրականացումը պահանջում է, որպեսզի հավասարություն լինի մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, ինչպես նաև հարգանք դատարանի անկախության, լիազորությունների տարանջատման սկզբունքի և դատարանի վերջնական որոշումների պարտադիրության հանդեպ:

3. Դատավորների ու պետական մեղադրողների տարբեր, բայց փոխլրացնող դերերի պատշաճ կատարումը արդարադատության արդար, անաչառ և արդյունավետ իրականացան անհրաժեշտ երաշխիքն է: Թե՛ դատավորները և թե՛ պետական մեղադրողները պետք է ունենան անկախություն իրենց գործառույթների առումով, ինչպես նաև լինեն ու հանդես գան միմյանցից անկախ:

4. Արդարադատությանը պետք է տրամադրվի համարժեք կազմակերպչական, ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրներ:

5. Դատավորների և, որտեղ կիրառելի է՝ երդվյալ ատենակալների դերը, մեղադրանքի կողմից իրենց կանոնավոր ներկայացվող գործերի վերաբերյալ պաշտաճ վճիռ կայացնելն է, առանց մեղադրող կողմի կամ պաշտպանության կողմի կամ որևէ այլ աղբյուրի որևէ անհարկի ներգործության:

6. Օրենքի և, որտեղ կիրառելի է՝ մեղադրող կողմի, հայեցողության իրավունքի կիրարկումը մինչդատական փուլում պահանջում է, որ պետական մեղադրողի կարգավիճակը երաշխավորված լինի օրենքով, հնարավոր ամենաբարձր մակարդակում, այնպիսի եղանակով, որը նման է դատավորների կարգավիճակին: Նրանք պետք է լինեն անկախ և ինքնուրույն իրենց որոշումների կայացման գործում և իրեն*ց* գործառույթները կատարեն արդարացիորեն, օբյեկտիվորեն ու անաչառորեն:

---

1 Սույն Հռչակագրին կցված է Բացատրական գրություն: Սույն Հռչակագիրը մշակվել է համատեղ՝ CCJE-ի և CCPE-ի աշխատանքային խմբերի կողմից Բորդոյում (Ֆրանսիա) և պաշտոնապես ընդունվել CCJE-ի և CCPE-ի կողմից Բոդոյում (Սլովենիա) 2009 թվականի նոյեմբերի 18-ին:

7. CCJE և CCPE-ն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 5-ի կետ 3-ի և հոդված 6-ի առնչությամբ հղում են կատարում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերին: Մասնավորապես՝ նրանք հղում են կատարում այն որոշումներին, որոնցում Դատարանը ճանաչել է գործադիր մարմնից և կողմերից դատական լիազորություններ իրականացնելու համար օրենքով լիազորված ցանկացած պաշտոնատար անձի անկախ լինելու պահանջը, որը, սակայն, չի բացառում ավելի բարձր դատական մարմնի ենթակայությունը: Դատախազներին դատական գործառույթների ցանկացած վերագրում պետք է սահմանափակել այն գործերով, որոնք վերաբերում են, մասնավորապես, թեթև պատժամիջոցներին, չպետք է իրականացվեն նույն գործի հետապնդման իրավունքի հետ համատեղ և չպետք է վնասեն նման գործերի վերաբերյալ դատական գործառույթներ իրականացնող անկախ ու անաչառ իշխանական մարմնի կողմից որոշում կայացնելու պատասխանող կողմի իրավունքը:

8. Պետական մեղադրողների անկախ կարգավիճակի համար, անհրաժեշտ են որոշ նվազագույն պահանջներ, մասնավորապես.

- նրանց պաշտոնը և գործունեությունը չեն կարող ենթարկվել դատախազությունից դուրս գտնվող որևէ աղբյուրի ներգործության կամ միջամտության,
- նրանց աշխատանքի ընդունելը, ծառայողական առաջխաղացումը, պաշտոնավարության անվտանգությունը, ներառյալ տեղափոխումը, պետք է ուժի մեջ մտնեն միայն օրենքի համաձայն կամ նրանց համաձայնությամբ, ինչպես նաև վարձատրությունը պետք է ապահովվի օրենքով նախատեսված երաշխիքներով:

9. Իրավունքի գերակայության սկզբունքով կառավարվող պետությունում, որտեղ դատախազության կառուցվածքը հիերարխիկ է, դատախազության արդյունավետությունը՝ պետական մեղադրողների առումով, խիստ կապված է իշխանության, հաշվետու լինելու ու պատասխանատվության ոլորտների թափանցիկության հետ: Առանձին դատախազներին տրվող ցուցումները պետք է լինեն գրավոր, օրենքին համապատասխան և, ըստ հնարավորության՝ հանրամատչելի մեղադրանքի ուղեցույցներին և չափանիշներին համապատասխան: Օրենքի համաձայն՝ պետական մեղադրողի դատական հետապնդում իրականացնելու կամ դրանից հրաժարվելու ցանկացած որոշման վերանայում պետք է իրականացվի անաչառ և օբյեկտիվ: Ամեն դեպքում անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել տուժողի շահերին:

10. Իրավական գործընթացում ներգրավված բոլոր մասնագետների/պրոֆեսիոնալների կողմից ընդհանուր իրավական սկզբունքները և էթիկական արժեքները կիսելը անհրաժեշտ է արդարադատության պատշաճ իրականացման համար: Ուսուցումը, ներառյալ ղեկավարության ուսուցումը, ինչպես իրավունք, այնպես էլ պարտականություն է դատավորների և դատախազների համար: Նման ուսուցումը պետք է կազմակերպել անաչառության հիմքով և կանոնավոր ու օբյեկտիվորեն գնատահել դրա արդյունավետությունը: Հնարավորության դեպքում, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներով դատավորների, պետական մեղադրողների և փաստաբանների համատեղ ուսուցումը կարող է իր ներդրումն ունենալ արդարադատության մակարդակի բարձրացման համար:

11. Հասարակության շահը պահանջում է նաև, որ լրատվամիջոցներին տրամադրվեն արդարադատության համակարգի գործունեության մասին հանրությանը տեղեկացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն: Իրավասու իշխանությունները պետք է տրամադրեն նման տեղեկատվությունը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով, մասնավորապես, անմեղության կանխավարկածին, արդար դատավարության իրավունքին և վարույթում ներգրավված բոլոր անձանց անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին: Թե՛ դատավորները և թե՛ դատախազները պետք է մշակեն յուրաքանչյուր մասնագիտության համար լրատվամիջոցների հետ հարաբերությունների առաջավոր պրակտիկայի կանոնագիրք կամ ուղեցույցներ:

12. Թե՛ դատավորները և թե՛ դատախազները դատական հարցերով միջազգային համագործակցության առանցքային դերակատարներ են: Անհրաժեշտ է հասնել տարբեր պետությունների իրավասու իշխանությունների միջև փոխադարձ վստահության ամրապնդմանը: Այս համատեքստում չափազանց կարևոր է, որ միջազգային համագործակցության միջոցով դատախազների կողմից հավաքվող ու դատական վարույթներում օգտագործվող տեղեկությունները լինեն թափանցիկ՝ իրենց բովանդակությամբ և բնույթով, ինչպես նաև մատչելի դառնան դատավորների ու բոլոր կողմերի համար՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանության նպատակով:

13. Անդամ պետություններում, որտեղ պետական մեղադրողները ունեն քրեական իրավունքի տիրույթից դուրս գտնվող գործառույթներ, այստեղ նշված սկզբունքները կիրառվում են սույն գործառույթների համար:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

ա. Կարծիքի նպատակը

1. Իրավունքի գերակայության սկզբունքի վրա հիմնված ժողովրդավարական պետության հիմնական խնդիրն է երաշխավորել, որ հիմնարար իրավունքները և ազատությունները, ինչպես նաև օրենքի առջև հավասարությունը լիովին հարգվեն, մասնավորապես, Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի դրույթներին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Դատարան) դատական նախադեպերին համապատասխան: Միևնույն ժամանակ, կարևոր է հասարակության մեջ ապահովել անվտանգություն և արդարություն՝ երաշխավորելով արդյունավետ միջոցառումներ քրեական արարքի առնչությամբ: Հասարակության անվտանգությունը ժողովրդավարական պետության մեջ պետք է նաև երաշխավորվի քրեական արարքի համար սահմանված պատիժների արդյունավետ կիրառմամբ (Հռչակագիր, կետ 1):

2. Այսպիսով, պետության առաքելությունն է ստեղծել և ապահովել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները հարգող արդյունավետ գործող դատական համակարգ: Չնայած այս առաքելությանը մասնակցում են բազմաթիվ դերակատարներ, լինեն դրանք պետական կամ (ինչպես փաստաբանների դեպքում) մասնավոր հատվածից, այնուամենայնիվ, անկախ և անաչառ արդարադատության իրականացման ապահովման ժամանակ առանցքային դերը կատարում են դատավորները և պետական մեղադրողները:

3. Իրենց նախկին Կարծիքներում Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհուրդը (CCJE) և Եվրոպայի դատախազների խորհրդակցական խորհուրդը (CCPE) անդրադարձել են արդարադատության արդյունավետության բազմաթիվ կարևոր ասպեկտներին՝ շեշտելով մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները: Պետք է շեշտել, որ դատավորների և դատախազների, ներառյալ քրեական իրավունքի տիրույթից դուրս աշխատող պետական մեղադրողների ընդհանուր նպատակն արդար, անաչառ ու արդյունավետ արդարադատության ապահովումն է: Այս տեսակետի նորարարությունն այն է, որ այն մշակվել է իրենց ազգային գործընկերներին ներկայացնող դատավորների և դատախազների կողմից և կապված է այն հարցերի հետ, որոնց վերաբերյալ դատավորները և դատախազները համաձայնության են եկել իրենց գործնական փորձի հիման վրա:

4. Ուստի, տեքստը բևեռվում է երկու առաքելությունների հիմնական ասպեկտների վրա, մասնավորապես. անկախություն, անձի իրավունքների և ազատությունների հարգում, օբյեկտիվություն և անաչառություն, էթիկա և դիոնթոլոգիա (էթիկայի ճյուղ, որը զբաղվում է պարտականությունների, բարոյական պարտավորության, բարոյական հանձնառության հարցերով), ուսուցում և հարաբերություններ լրատվամիջոցների հետ:

5. Սույն Կարծիքը պետք է դիտարկել դատավորների ու դատախազների դատական վարույթների տարբեր փուլերում ընդգրկված պրոֆեսիոնալ անձանց հետ հարաբերությունների համատեքստում, ինչպիսիք են՝ փաստաբանները, դատական փորձագետները, դատական ծառայողները, ինչպես առաջարկված է 2001 թվականի փետրվարի 7-ին Նախարարների խորհրդի կողմից ընդունված Եվրոպայում դատավորների գլոբալ գործողությունների ծրագրի շրջանակում և 2000 թվականի

հոկտեմբերի 6-ին Նախարարների խորհրդի կողմից ընդունված քրեական իրավունքի համակարգում մեղադրող կողմի դերի մասին Առաջարկություններ (2000)19-ում:

բ. Ազգային համակարգերի տարբերությունը

6. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում կողք-կողքի գործում են բազմաթիվ իրավական համակարգեր.

i. Ընդհանուր իրավունքի համակարգեր, որտեղ առկա է հստակ տարանջատում դատավորների ու դատախազների միջև և որտեղ *քրեական հետապնդման լիազորությունը* համակցված չէ այլ գործառույթներով,
ii. Մայրցամաքային/կոնտինենտալ-եվրոպական իրավունքի համակարգեր, որտեղ կարելի է դիտարկել տարբեր տիպեր, որոնցում «դատական կորպուսի» մաս են կազմում կամ դատավորները և դատախազները, կամ, ընդհակառակը՝ միայն դատավորներն են պատկանում այդ կորպուսին:

Ի լրումն, այս տարբեր համակարգերում պետական մեղադրողի ինքնավարությունը գործադիրից կարող է լինել լիովին կամ սահմանափակ:

7. Սույն Կարծիքի նպատակն է Դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո հստակեցնել կիրառելի սկզբունքների և մոտեցումների հիմքը՝ ընդհանուր կետերը, ինչպես նաև տարբերությունները հաշվի առնելիս:

8. Գործառույթների տարանջատման երաշխիքը վարույթի կողմերի նկատմամբ դատավորի անաչառության հիմնական պայմանն է: Անաչառությունը, ինչպես նշված է արդարադատության անկախության և դատավորների անփոխարելիության վերաբերյալ չափորոշիչների մասին CCJE-ի Կարծիք թիվ 1-ում (2001) ինստիտուցիոնալ երաշխիքների մեջ առաջինն է, որը սահմանում է դատավորի դիրքորոշումը: Ավելին, այն ենթադրում է, որ պետական մեղադրողին է վերագրված ապացուցման պարտականությունը և մեղադրանքի առաջադրումը, որը կազմում է վերջնական վճռի առաջին ընթացակարգային երաշխիքներից մեկը:

9. Յուրաքանչյուր համակարգում դատավորի դերը, հետևաբար, տարբերվում է պետական մեղադրողի դերից: Նրանց համապատասխան առաքելությունները մնում են, սակայն, փոխլրացնող: Դատավորի և դատախազի միջև չկան հիերարխիկ կապեր:

10. Պետական մեղադրանքի կողմի անկախությունն արդարադատության անկախության համար անհրաժեշտ/պարտադիր արդյունք է: Դատախազի դերը մարդու իրավունքների պաշտպանության ժամանակ, այդ թվում կասկածյալների, մեղադրյալների և տուժողների դեպքում կարող է լավագույնս կատարվել այնտեղ, որտեղ դատախազը որոշում կայացնելիս անկախ է գործադիրից և օրենսդիրից և որտեղ ճշգրտորեն պահպանվում են դատավորների ու դատախազների տարբեր դերերը: Իրավունքի գերակայության սկզբունքի վրա հիմնված ժողովրդավարության պայմաններում մեղադրանքի քաղաքականության հիմքը սահմանվում է օրենքով (Հռչակագիր, կետ 3):

գ. Գործառույթների առանձնահատկություններ

11. Թե՛ դատախազներն և թե՛ դատավորներն իրենց գործառույթները պետք է իրականացնեն արդարացի, անաչառ, օբյեկտիվ և հետևողական, պետք է հարգեն և ձգտեն պաշտպանել մարդու իրավունքները և փորձեն ապահովել դատական համակարգի արագ և արդյունավետ աշխատանքը:

12. Իրենց գործառույթներն իրականացնելիս, դատախազները հիմնվում են կամ հայեցողության իրավունքի համակարգի (հնարավորության սկզբունք) կամ պարտադիր մեղադրանքի (օրինականության սկզբունք) վրա, բայց երկու դեպքում էլ դատախազները հանդես են գալիս ոչ միայն հասարակության անունից՝ որպես մեկ ամբողջականության, այլ նաև կատարում են պարտականություններ որոշակի անհատների հանդեպ, մասնավորապես, մեղադրյալի հանդեպ, ում համար կրում է արդարության պարտականություն, ինչպես նաև հանցագործությունից տուժածների հանդեպ, ում համար պարտավոր են ապահովել, որ նրանց իրավունքները լիովին հաշվի առնվեն: Այդ իմաստով և առանց կողմերի հավասարության սկզբունքի անկողմնակալ հարգանքի, դատախազը չի կարող դիտարկվել հավասար այլ կողմերի համար (Հռչակագիր, կետ 2): Դատախազները պետք է պատշաճորեն հաշվի առնեն նաև տուժողների տեսակետերը և մտահոգությունները ու հրատապ գործողություններ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ տուժողներն իրազեկված լինեն թե՛ իրենց իրավունքների և թե՛ վարույթի ընթացքի մասին: Նրանք չպետք է նախաձեռնեն կամ շարունակեն վարույթը, երբ մատչելի ապացույցների վրա հիմնված անաչառ քննությունը ցույց է տալիս, որ մեղադրանքն անհիմն է:

դ. Գոյություն ունեցող միջազգային մեխանիզմներ

13. Եվրոպայի խորհրդի մի քանի տեքստեր, ինչպես նաև Դատարանի դատական նախադեպերը ուղղակի կամ անուղղակի են վերաբերում դատավորների ու դատախազների փոխհարաբերություններին առնչվող թեմաներին:

14. Նախ և առաջ, Դատարանը դատավորներին խնդիրներ է ներկայացնում միայն որպես իրավունքների ու ազատությունների պահապանների իրավասությունների շրջանակներում, տես՝ մասնավորապես, Հոդված 5 (ազատության և անվտանգության իրավունք) և Հոդված 6 (արդար դատավարության իրավունք), սակայն Դատարանը այդպես է վարվում նաև պետական մեղադրողների հանդեպ (որպես Հոդված 5-ի 1ա և 3 ու 6 կետերի արդյունք):

15. Դատարանը, որի խնդիրներից մեկը Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանությունն է, կայացրել է դատավորների ու դատախազների փոխհարաբերություններին վերաբերող մի շարք որոշումներ:

16. Մասնավորապես, Դատարանն անդրադարձել է այն խնդրին, երբ անձը միևնույն գործով հերթով ծառայում է՝ մեկ որպես դատախազ, ապա որպես դատավոր (1982 թվականի հոկտմբերի 1 վճիռը՝ «*Piersack v. Belgium»* գործով, կետեր 30-32), դատարաններին կամ մեղադրող իշխանություններին երբևէ քաղաքական ճնշումների չենթարկվելու երաշխավորության անհրաժեշտությանը (2008 թվականի փետրվարի 12-ի վճիռը՝ «*Guja v. Moldova»* գործով, կետեր 85-91), ազատ արտահայտման համատեքստում դատավորներին ու դատախազներին պաշտպանելու անհրաժեշտությանը (2008 թվականի հունվարի 8-ի վճիռը՝ «*Saygili and Others v. Turkey»* գործով, կետեր 34-40), քննելու, հետապնդելու և մարդու իրավունքների խախտման դեպքերը պատժելու դատարանների և պետական մեղադրողների ընթացակարգային պարտականություններին (2007 թվականի մայիսի 15-ի վճիռը՝ «*Ramsahai and Others v. the Netherlands»* գործով, կետեր 321-357) և վերջապես դատական նախադեպերի ստանդարտացման հարցում մեղադրող իշխանությունների ներդրմանը (2008 թվականի հունիսի 10-ի վճիռը՝ «*Martins de Castro and Alves Correia de Castro v. Portugal* » գործով, կետեր 51-66):

17. Քրեական դատավարության ոլորտում, Դատարանը քննել է պետական մեղադրանքի կողմի կարգավիճակը և լիազորությունները ու Եվրոպական կոնվենցիայի հոդված 5-ի

կետ 3-ի պահանջները («օրենքով լիազորված դատական լիազորություններ իրականցնելու» այլ պաշտոնյաների առնչությամբ) իրական տարբեր իրավիճակների համատեքստում (տես, ի թիվս այլոց, 1979 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռները՝ «*Schiesser v. Switzerland»* գործով, կետեր 27-38, «*De Jong*, *Baljet and Van den Brink v. the Netherlands»* գործով, կետեր 49-50, «*Assenov and Others v. Bulgaria»* գործով, կետեր 146-150, «*Niedbala v.* Poland» գործով, կետեր 45-47, «*Pantea v. Romania»* գործով, կետեր 232-243 և 2008 թվականի հուլիսի 10-ի վճիռները՝ «*Medvedyev and Others v. France»* գործով, կետեր 61, 67-69): Դատարանը քննել է նաև դատախազական ծառայության կարգավիճակը, իրավասությունը և վերահսկողական լիազորությունները հեռախոսային խոսակցությունների վերահսկողության դեպքում (2007 թվականի ապրիլի 26-ի վճիռը՝ «*Dumitru Popescu v. Romania»* գործով, կետեր 68-86) և գերագույն դատարանների խորհրդակցությունների ժամանակ մեղադրանքի ծառայության ներկայությունը (1991 թվականի հոկտեմբերի 30-ի վճիռը՝ «*Borgers v. Belgium*. գործով, կետեր 24-29 և 2003 թվականի հուլիսի 8-ի վճիռը՝ «*Fontaine and Berlin v. France*. գործով, կետեր 57-67):

18. Վերջապես, քրեական ոլորտից դուրս, Դատարանն ունի բավականին լավ զարգացած դատական նախադեպերի կառույց «դոկտրինայի ձևավորման» նպատակով, համաձայն որի դատախազների ներկայությունը դատարական քննարկումների ժամանակ հակասում է Եվրոպական կոնվենցիայի հոդված 6-ի կետ 1-ին (1996 թվականի փետրվարի 20-ի վճիռը՝ «*Lobo Machado v. Portugal»* գործով, կետեր 28-32 և 2006 թվականի ապրիլի 12-ի վճիռը՝ «*Martinie c. France [GC]»* գործով, կետեր 50-55):

19. Եվրոպայի խորհրդի կողմից պատրաստել են նաև այլ տեքստեր.

- Նախարարների կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» առաջարկությունը՝ Rec (94)12 ընդունում է կապերը դատավորների և պետական մեղադրողների միջև, առնվազն այն երկրներում, որտեղ վերջիններս դատական իշխանություն ունեն այն իմաստով, որը Դատարանի կողմից, տրված է սույն արտահայտությանը:

- Նախարարների կոմիտեի «Քրեական իրավունքի համակարգում պետական մեղադրողի դերի մասին» առաջարկությունը՝ Rec(2000)19 հստակորեն շեշտում է կապերը դատավորների և պետական մեղադրողների միջև, միևնույն ժամանակ ընդգծելով ընդհանուր սկզբունքները, որոնք կարևոր են ապահովելու համար, որ այս փոխհարաբերությունները միանշանակորեն նպաստում են դատավորների ու պետական մեղադրողների խնդիրների պատշաճ կատարմանը: Այն հատկապես շեշտում է պետությունների պարտականությունը «ձեռնարկել համապատասխան միջոցներ ապահովելու համար, որ պետական մեղադրողների իրավական կարգավիճակը, իրավասությունները և դատավարական դերը սահմանված լինեն օրենքով այնպես, որ բացառվի որևէ օրինական կասկած դատավորների անկախության ու անաչառության վերաբերյալ»:

- Նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության պարզեցման մասին» առաջարկությունը՝ Rec (87)18 տրամադրում է այն խնդիրների տարբեր օրինակներ, որոնք նախկինում տրված էին միայն դատավորներին և այժմ հանձնարարված են պետական մեղադրանքի կողմին (որի հիմնական առաքելությունը դեռևս շարունակում է բաղկացած լինել մեղադրանքի հարուցումը և իրականացումը): Այս նոր խնդիրները լրացուցիչ պահանջներ

են ստեղծում պետական մեղադրանքի կողմի կազմակերպման և այդ գործառույթներն ստանձնող անձանց ընտրության վերաբերյալ:

II. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ա. Դատավորների ու պետական մեղադրողների ներքին ու արտաքին անկախության երաշխիքները, իրավունքի գերակայության սկզբունքը՝ որպես նրանց անկախության պայման

20. Դատավորները և պետական մեղադրողները պետք է անկախ լինեն միմյանցից և ունենան նաև արդյունավետ անկախություն իրենց համապատասխան գործառույթներն իրականացնելիս: Արդարադատության համակարգում և ընդհանրապես հասարակության մեջ նրանք տարբեր գործառույթներ են կատարում: Ուստի, գոյություն ունեն կառուցակարգային և գործառույթային անկախության տարբեր հեռանկարներ (Հռչակագիր, կետ 3):

21. Դատական իշխանությունը պետք է հիմնվի որևէ արտաքին ազդեցությունից կամ որևէ այլ աղբյուրից տրվող ցուցումներից անկախության սկզբունքի, ինչպես նաև ներքին ենթակայության բացակայության վրա: Դրա դերը և, առիթի դեպքում՝ դատավորների դերը, մեղադրանքի և կողմերի կողմից իրենց ներկայացրած գործերի վերաբերյալ պատշաճ դատավճիռ կայացնելն է: Սա ներառում է պետական մեղադրողի կամ պաշտպանության կողմից բոլոր անհարկի ներգործությունների բացառումը: Դատավորները, դատախազները և պատասխանողի փաստաբանները պետք է հարգեն միմյանց դերերը (Հռչակագիր, կետ 5):

22. Դատավորների անկախության հիմնարար սկզբունքը ներառված է Եվրոպական կոնվենցիայի հոդված 6-ում և շեշտում է CCJE-ի նախկին կարծիքները:

23. Դատելու գործառույթը ենթադրում է պատասխանատվություն՝ մեղադրվող անձանց համար պարտադիր ուժ ունեցող որոշումներ կայացնելու և վեճերն օրենքի հիման վրա լուծելու համար: Երկուսն էլ դատավորի՝ պետության այլ լիազորություններից անկախ դատական իշխանության, բացառիկ իրավունքներն են[2]: Սա, ընդհանուր առմամբ, պետական մեղադրողների առաքելությունը չէ, ովքեր պատասխանատու են քրեական վարույթ հարուցելու կամ շարունակելու համար:

24. Եվրոպական կոնվենցիայի հոդված 5-ի կետ 3-ի և հոդված 6-ի առնչությամբ CCJE և CCPE հղում են կատարում Դատարանի համապատասխան դատական նախադեպերին: Մասնավորապես, նրանք հղում են կատարում «Schiesser vs. Switzerland» գործով վճռին, որով Դատարանը ճանաչեց «դատական լիազորություններ իրականացնելու համար օրենքով լիազորված» ցանկացած պաշտոնյայի անկախությունը՝ գործադիրից և կողմերից, որը, սակայն չի բացառում ավելի բարձր դատական մարմնի ենթակայությունը (Հռչակագիր, կետ 7):

25. Որոշ անդամ պետություններ պետական մեղադրողին վերագրում են որոշ ոլորտներում պարտադրող ուժ ունեցող որոշումների կայացում՝ քրեական հետապնդում իրականացնելու փոխարեն կամ որոշակի շահեր պաշտպանելու համար: CCJE և CCPE-ն կարծում են, որ դատական գործառույթների ցանկացած վերապահում դատախազներին պետք է սահմանափակվի այն դեպքերով, որոնք անռչվում են թեթև

2 Տես՝ մասնավորապես CCJEի-ի Կարծիք թիվ 1 (2001թ.) դատական համակարգի անկախության և դատավորների անփոխարինելիության վերաբերյալ չափորոշիչներ ու դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին առաջարկություն Rec(94)12:

պատժամիջոցներին, չպետք է իրականացվեն նույն գործով հետապնդման իրավունքի հետ համատեղ և չպետք է վնասեն նման գործերի վերաբերյալ դատական գործառույթներ իրականացնող անկախ ու անաչառ իշխանության կողմից որոշում կայացնելու պատասխանող կողմի իրավունքը: Ոչ մի հանգամանքում որևէ նման վերագրում պետական մեղադրողին թույլ չի տալիս կայացնելու անձնական ազատությունները սահմանափակող վերջնական որոշումներ և զրկելու ազատությունից՝ առանց դատավորին կամ դատարանին բողոքարկման իրավունքի (Հռչակագիր, կետ 7):

26. Պետական մեղադրանքի կողմը անկախ իշխանություն է, որի գոյությունը հիմնված է օրենքի վրա՝ հնարավոր ամենաբարձր մակարդակում: Ժողովրդավարական պետություններում ոչ խորհրդարանը, ոչ էլ որևէ պետական մարմին չպետք է փորձի անհարկի ներգործել առանձին դեպքերի առնչությամբ պետական մեղադրողի կողմից կայացրած որևէ կոնկրետ որոշման վրա՝ որոշելու համար, թե ինչպես պետք է իրականացվեր որևէ կոնկրետ դատական հետապնդում կամ ստիպելու պետական մեղադրողներին փոխելու իրենց որոշումները (Հռչակագիր, կետեր 8 և 9):

27. Պետական մեղադրողների անկախությունն անհրաժեշտ է իրենց առաքելությունը կատարելու նպատակով նրանց հնարավորություն տալու համար: Այն ամրապնդում է նրանց դերն իրավական պետության և հասարակության մեջ, ինչպես նաև երաշխավորում է, որ արդարադատության համակարգը գործի արդարացի և արդյունավետ և իրականացվեն դատական անկախության բոլոր սպասելիքները (Հռչակագիր, կետեր 3 և 8): Այսպիսով, ինչպես դատավորների համար ապահովված անկախությունը, այնպես էլ պետական մեղադրողների անկախությունն ի շահ դատախազներին տրված բացառիկ իրավունք կամ արտոնություն չէ, այլ երաշխիք՝ ի շահ արդար, անաչառ և արդյունավետ արարադատության, որը պաշտպանում է անձանց թե՛ հանրային և թե՛ մասնավոր շահերը:

28. Դատախազի գործառույթները, որը կարող է բնութագրվել պարտադիր կամ հայեցողական իրավունքի դատական հետապնդման սկզբունքներով, տարբերվում են ըստ յուրաքանչյուր երկրում գոյություն ունեցող համակարգերի, ըստ այն կարգավիճակի, որը պետական մեղադրողն ունի տվյալ կառուցակարգերում և քրեական դատավարությունում:

29. Անկախ իր կարգավիճակից, պետական մեղադրողները պետք է ունենան գործառույթային լիակատար անկախություն իրենց օրինական դերերը կատարելիս, անկախ դրանք պատժիչ բնույթի են, թե ոչ: Անկախ այն բանից, նրանք գտնվում են իշխանական ենթակայության ներքո, թե ոչ, նրանց հաշվետու լինելը ապահովելու և կամայական կամ ոչ պատշաճ վարույթները կանխելու համար, պետական մեղադրողներին պետք է տրամադրեն հստակ և թափանցիկ ուղեցույցներ՝ իրենց դատական հետապնդման լիազորությունները իրականացնելու վերաբերյալ (Հռչակագիր, կետ 9):

30. Այս առումով, CCJE և CCPE-ն ցանկանում են վերհիշել, մասնավորապես, Առաջարկություն (2000)19, որով ճանաչվում է, որ արդար, հետևողական և արդյունավետ պետական մեղադրանքի կողմի գործունեությանն աջակցելու համար պետությունները պետք է փորձեն սահմանել ընդհանուր սկզբունքներ և չափանիշներ, որոնք ծառայում են որպես հղում, որոնց հիման վրա դատախազներն առանձին դեպքերով որոշումներ են ընդունում:

31. Դատախազների ցուցումները պետք է լինեն գրավոր, օրենքին համապատասխան, ըստ հնարավորության՝ հանրամատչելի մեղադրանքի ուղեցույցներին և չափանիշներին համապատասխան (Հռչակագիր, կետ 9)[3]:

32. Դատական կարգով հետապնդման կամ դրանից հրաժարվելու ցանկացած որոշում պետք է լինի իրավաբանորեն ողջամիտ: Դատախազի կողմից դատական կարգով հետապնդման կամ դրանից հրաժարվելու որոշման օրենքի համաձայն ցանկացած վերանայում պետք է իրականացվի անկողմնակալ և օբյեկտիվ, անկախ այն բանից դա կատարում է մեղադրանքի կողմը՝ ներքին կարգով, թե անկախ դատական իշխանությունը: Տուժողի շահը, ինչպես նաև այլ անձի օրինական շահերը պետք է միշտ պատշաճորեն հաշվի առնվեն (Հռչակագիր, կետ 9):

33. Դատավորների և դատախազների գործառույթների փոխլրացնող բնույթը նշանակում է, որ երկուսն էլ գիտակցում են, որ անկողմնակալ արդարադատությունը պահանջում է պետական մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև հավասարություն, և որ պետական մեղադրողները պետք է միշտ գործեն ազնվորեն, օբյեկտիվ և անաչառ: Դատավորները և պետական մեղադրողները պետք է միշտ հարգեն կասկածյալների, մեղադրվող անձանց և զոհերի ազնվությունը, ինչպես նաև պաշտպանության իրավունքները (Հռչակագիր, կետեր 2 և 6):

34. Դատավորի և պաշպանի անկախությունն անբաժանելի է իրավունքի գերակայության սկզբունքից: Դատավորները, ինչպես նաև դատախազները հանդես են գալիս ընդհանուր շահով, հասարակության և դրա անդամների անունից, ովքեր կարիք ունեն իրենց իրավունքների և ազատությունների երաշխավորմանը բոլոր ոլորտներում: Նրանք միջամտում են այն ոլորտներում, որտեղ առավել զգայուն մարդու իրավունքները (անձնական ազատություններ, անձնական կյանք, գույքի պաշտպանություն և այլն) և արժանի են ամենամեծ պաշտպանության: Դատախազները պետք է ապահովեն, որ ապացույցները հավաքվեն, վարույթն սկսվի և շարունակվի օրենքին համապատասխան: Այդ ընթացքում, նրանք պետք է պահպանեն Եվրոպական կոնվենցիայում և միջազգային իրավական այլ ակտերում ձևակերպված սկզբունքները, հատկապես հարգեն անմեղության կանխավարկածը, պաշտպանության և արդար դատավարության իրավունքները: Դատավորները պետք է հսկեն, որ այս սկզբունքները հարգվեն իրենց ներկայացված վարույթներում:

35. Եթե պետական մեղադրողին թույլատրված է հղում կատարել դատավորի գործողություններին և օրենքով սահմանված միջնորդություններին և դատավորին ներկայացնել փաստական հանգամանքներ ու դրանք հիմնավորող օրենքը, ապա դատախազը որևէ կերպ չի կարող միջամտել դատավորի որոշման կայացմանը և պարտավոր է ենթարկվել դատավորի որոշումներին: Դատախազը կարող է չհակառակվել նման որոշումների կիրարկմանը որևէ այլ կերպ, քան հետպահանջի իրավունքի իրականացմամբ, որը կարող է նախատեսված լինել օրենքով (Հռչակագիր, կետեր 4 և 5):

36. Պետական մեղադրողի և դատավորի գործունեությունը և վարքագիծը կասկած չպետք է հարուցեն նրանց օբյեկտիվության և անաչառության հարցում: Թե՛ դատավորները և թե՛ պետական մեղադրողները պետք է ունենան անկախություն իրենց գործառույթներն իրականացնելիս և լինեն ու հանդես գան միմյանցից անկախ: Դատավարության կողմերի և հասարակության՝ որպես ամբողջության, մոտ չպետք է լինի նույնիսկ թողտվության ակնարկ դատավորների և դատախազների միջև կամ խառնաշփոթություն երկու գործառույթների միջև:

3 Տես՝ նաև CCPE-ի Կարծիք թիվ 3 (2008) քրեական իրավունքի տիրույթից դուրս պետական մեղադրողի դերի մասին:

37. Վերոհիշյալ սկզբունքների համար հարգանքը ենթադրում է, որ դատախազների կարգավիճակը երաշխավորվում են օրենքով հնարավոր ամենաբարձր մակարդակում՝ դատավորների կարգավիճակին համանման ձևով: Դատավորների և դատախազների առաքելությունների նմանության և փոխլրացման բնույթը ստեղծում են համանման պահանջներ ու երաշխիքներ նրանց կարգավիճակի և ծառայության պայմանների առումով, մասնավորապես՝ աշխատանքի ընդունում, ուսուցում, ծառայողական առաջխաղացում, կարգապահություն, տեղափոխում (որը ուժի մեջ պետք է մտնի միայն օրենքի համաձայն կամ նրանց համաձայնությամբ), վարձատրություն, գործառույթների դադարեցում և մասնագիտական միավորումներ ստեղծելու ազատություն (Հռչակագիր, կետ 8):

38. Թե՛ դատավորները և թե՛ դատախազները պետք է, ըստ գործող ազգային համակարգի, ուղղակիորեն կապված լինեն իրենց համապատասխան ծառայությունների վարչարարության ու կառավարման հետ: Այս նպատակով, դատավորներին և դատախազներին պետք է տրամադրվեն բավարար ֆինանսական միջոցներ, ինչպես նաև ենթակառուցվածք և համապատասխան մարդկային ու նյութական ռեսուրսներ և դրանք պետք է օգտագործվեն ու կառավարվեն նրանց լիազորության ներքո (Հռչակագիր, կետ 4):

բ. Դատավորների և դատախազների էթիկան և դիոնթոլոգիա (էթիկայի ճյուղ, որը զբաղվում է պարտականությունների, բարոյական պարտավորության, բարոյական հանձնառության հարցերով)

39. Դատավորները և դատախազները պետք է լինեն չափազանց ազնիվ անհատներ և ունենան համապատասխան մասնագիտական ու կազմակերպչական հմտություններ: Իրենց գործառույթների բնույթի շնորհիվ, որոնք նրանք ընդունել են գիտակցաբար, դատավորները և դատախազները մշտապես ենթակա են հանրային քննադատության և պետք է, հետևաբար, իրենց համար ամրագրեն, առանց կանխակալ վերաբերմունքի, օրենքի շրջանակում, իրենց գործերի մասին հայտնելու իրենց իրավունքի սահմանափակման պարտականությունը: Որպես արդարադատության հիմնական դերակատարներ, նրանք պետք է միշտ լինեն ազնիվ և արժանի իրենց մասնագիտությանը և բոլոր իրավիճակներում ցուցաբերեն իրենց պաշտոնին վայել վարքագիծ[4] (Հռչակագիր, կետ 11):

40. Դատավորները և դատախազները պետք է ձեռնպահ մնան որևէ գործողությունից կամ վարքագծից, որը կարող է վտանգել նրանց անկախության և անաչառության նկատմամբ վստահությունը: Նրանք պետք է դիտարկեն իրենց ներկայացված գործերը պատշաճ ուշադրությամբ և խելամիտ ժամկետում, օբյեկտիվ և անաչառ:

41. Պետական մեղադրողները պետք է ձեռնպահ մնան հրապարակային մեկնաբանություններ և հայտարարություններ անելուց լրատվական միջոցներով, ինչը կարող է ստեղծել դատարանի վրա ուղղակի կամ անուղղակի ճնշման տպավորություն՝ որոշակի որոշում կայացնելու համար կամ ինչը կարող է վնասել դատավարության արդարությունը:

4 Դատավորների համար, օրինակ, տես՝ CCJE-ի Կարծիք թիվ 3 (2002թ.) դատավորների մասնագիտական վարքագծի սկզբունքները և հիմնական կանոնները, մասնավորապես էթիկան, անհամատեղելի վարքագիծը և անաչառությունը (2002թ.) և Դատական մարմնի վարքագծի Բանգալորի սկզբունքները (ընդունվել է UN ECOSOC-ի կողմից 2006թ.-ին) և Դատավորների համընդհանուր խարտիան, ընդունվել է Դատավորների միջազգային ասոցիացիայի կենտրոնական խորհրդի կողմից 1999 թվականի նոյեմբերի 17-ին Թայփեյում (Թայվան): Դատախազների համար՝ բացի դատախազների դերի մասին ՄԱԿ-ի ուղեցույցներից (1990թ.), տես՝ Պետական մեղադրողների էթիկայի և վարքագծի ուղեցույցներ (Բուդապեշտի ուղեցույցներ), ընդունվել է Եվրոպայի գլխավոր դատախազների կողմից 2005 թվականի մայիսի 31-ին՝ նրանց Բուդապեշտում անցկացվող կոնֆերանսում:

42. Դատավորները և դատախազները պետք է ձգտեն ծանոթանալ միմյանց գործառույթները ղեկավարող էթիկական չափորոշիչներին: Սա կնպաստի միմյանց առաքելությունները հասկանալուն և դրանք հարգելուն՝ դրանով իսկ ընդլայնելով ներդաշնակ համագործակցության հեռանկարները:

գ. Դատավորների և պետական մեղադրողների ուսուցումը

43. Մասնագիտական հմտությունների բարձր մակարդակը կարևոր նախապայման է դատավորների և պետական մեղադրողների նկատմամբ հանրության վստահության համար և որով սկզբունքորեն ընդգծվում է նրանց օրինապահությունն ու դերը: Համարժեք մասնագիտական ուսուցումը կարևոր դեր է խաղում, քանի որ այն թույլ է տալիս բարելավել իրենց աշխատանքը/կատարողականը և այդպիսով մեծացնել արդարադատության որակն ընդհանրապես (Հռչակագիր, կետ 10):

44. Դատավորների և դատախազների ուսուցումն ընդգրկում է ոչ միայն ծանոթացում մասնագիտական կարողություններին, որոնք անհրաժեշտ են մասնագիտության տիրապետման համար, այլ նաև հավասարապես անհրաժեշտ է մշտական ուսուցում՝ իրենց աշխատանքային գործունեության ընթացքում: Այն անդրադառնում է նրանց մասնագիտական գործունեության ամենատարբեր ոլորտներին, ներառյալ դատարանների աշխատանքի և մեղադրանքի մարմինների կառավարման վարչարարությանը, ինչպես նաև՝ մասնագիտական հմտություններին: Դատական համակարգի պատշաճ վարչարարության շահերից ելնելով, մշտական ուսուցումը պահանջում է պահպանել մասնագիտական որակավորման բարձր մակարդակ և այն ավելի ամբողջական դարձնելը ոչ միայն դատավորների ու պետական մեղադրողների իրավունքն է, այլ նաև պարտականությունը (Հռչակագիր, կետ 10):

45. Հնարավորության դեպքում, դատավորների, պետական մեղադրողների ու փաստաբանների համատեղ ուսուցումն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներով կարող է նպաստել հասնելու ամենաբարձր որակի արդարադատության: Այս ընդհանուր ուսուցումը պետք է հնարավոր դարձնի ընդհանուր իրավական մշակույթի հիմքի ստեղծումը (Հռչակագիր, կետ 10):

46. Եվրոպական տարբեր իրավական համակարգերով դատավորներին ու դատախազներին տրամադրվող ուսուցումը կատարվում է տարբեր մոդելների համաձայն: Որոշ երկրներ ստեղծել են ակադեմիա, ազգային դպրոց կամ այլ մասնագիտական հաստատություն, մյուսները՝ այդ լիազորությունը հանձնարարել են կոնկրետ մարմիններին: Պետք է կազմակերպել ուսուցման միջազգային դասընթացներ դատավորների ու դատախազների համար: Կարևոր է, բոլոր դեպքերում, ապահովել նման ուսուցման կազմակերպման համար պատասխանատու հաստատության ինքնավար բնույթը, որովհետև այս ինքնավարությունը մշակութային բազմակարծության և անկախության երաշխիքն է[5]:

47. Այս համատեքստում մեծ կարևորություն է տրվում դասընթացներում դատավորների ու դատախազների անմիջական ներգրավմանը, քանի որ դա նրանց հնարավորություն է ընձեռում ներկայացնել կարծիքներ, որոնք կազմվում են իրենց համապատասխան մասնագիտական փորձի արդյունքում: Դասընթացները պետք է ներառեն ոչ միայն անձնական ազատությունների իրավունքը և պաշտպանությունը, այլ նաև ընդգրկեն կառավարման գործելակերպերի մոդուլներ և դատավորների ու դատախազների համապատասխան առաքելությունների ուսումնասիրություններ: Միևնույն ժամանակ,

5 Տես՝ CCJE-ի Կարծիք թիվ 4 (2003թ.) դատավորների համար համապատասխան նախնական ու աշխատանքին զուգընթաց ուսուցում ազգային և եվրոպական մակարդակներում և CCJE-ի Կարծիք թիվ 10 (2007թ.) Դատարանների խորհրդի ծառայությունը հասարակության համար, կետ 65-72:

իրավաբանների ու գիտական աշխարհի լրացուցիչ ներդրումը կարևոր է նեղ մոտեցումից խուսափելու համար: Վերջապես, ուսուցման որակը և արդյունավետությունը պետք է գնահատել կանոնավոր կերպով և օբյեկտիվորեն:

III. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ա. Դատավորների ու դատախազների դերը մինչդատական վարույթում

48. Մինչդատական փուլում դատավորը՝ անկախ կամ երբեմն դատախազի հետ միասին, վերահսկում է քննչական գործողությունների օրինականությունը, հատկապես, եթե դրանք ազդում են հիմնարար իրավունքների (ձերբակալման, ազատազրկման, կալանավորման, հատուկ քննչական տեխնիկաների կիրառման և այլնի վերաբերյալ որոշումներ) վրա:

49. Որպես ընդհանուր կանոն, պետական մեղադրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն քննության օրինականությունը և վերահսկեն մարդու իրավունքների պահպանումը քննիչների կողմից, երբ որոշվում է քրեական հետապնդումն սկսելու կամ շարունակելու հարցը:

50. Առաջարկությունների Rec(2000)19 նախատեսում է, որ երբ ոստիկանությունը ենթարկվում է պետական մեղադրողի ենթակայությանը կամ երբ նախաքննությունը կատարվում կամ վերահսկվում է դատախազի կողմից, ապա պետությունը պետք է ձեռնարկի արդյունավետ միջոցառումներ երաշխավորելու համար, որ պետական մեղադրողը կարող է ցուցումներ տալ, գնահատել, հսկել և պատժամիջոցներ նշանակել խախտումների համար: Այնտեղ, որտեղ ոստիկանությունն անկախ է պետական մեղադրողներից, առաջարկությամբ պարզապես նախատեսվում է, որ պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի ապահովելու համար, որ պետական մեղադրողների ու քննչական մարմինների միջև առկա լինի համապատասխան ու գործառնական համագործակցություն:

51. Նույնիսկ այն համակարգերում, որտեղ նախաքննությունը վերահսկվում է դատախազի կողմից, որպիսի կարգավիճակը նրան լիազորվում է դատական իշխանությամբ, կարևոր է, որ այս համատեքստում ձեռնարկվի ցանկացած միջոցառում, որը ընդգրկում է ազատությունների էական օրինախախտումներ, մասնավորապես՝ ժամանակավոր կալանավորում, վերահսկվի դատավորի կամ դատարանի կողմից:

բ. Դատավորների ու պետական մեղադրողների միջև հարաբերությունները քրեական հետապնդման ու դատական լսումների ընթացքում

52. Որոշ պետություններում դատախազները կարող են կարգավորել գործերի հոսքը՝ կիրառելով հայեցողական լիազորությունը՝ որոշելու համար, թե որ գործերն են ներկայացվելու դատարան և որ գործերը կարելի է լուծել առանց դատական վարույթների (մեղադրողի ու տուժողի միջև հաշտեցումը, կողմերի համաձայնությամբ գործի մինչդատական կարգավորումը, մեղքի խոստովանության ընդունման առնչվող պարզեցված ու արագացված վարույթները, հաշտեցման նպատակով միջամտությունը և այլն), որոնք բոլորն էլ նպաստում են նվազեցնելու դատական համակարգի բեռը և որոշելու մեղադրանքի առաջնային խնդիրները:

53. Պետական մեղադրանքի այնպիսի լիազորություններ, որոնք արտացոլում են քրեական իրավունքի վարչարարության արդիականացումը, սոցիալիզացիան, մարդասիրական բնույթը և ռացիոնալիզացիան օգտակար են դատարաններում

գործերի գերծանրաբեռնվածությունը կրճատելիս: Մյուս կողմից, հենց որ դատախազները ստանում են կոնկրետ գործեր դատարան չներկայացնելու իրավունք, անհրաժեշտ է խուսափել քաղաքական ուժի կամայական գործողություններից, խտրականությունից կամ հնարավոր անօրինական ճնշումներից ու պաշտպանել տուժողների իրավունքները: Անհրաժեշտ է նաև հնարավորություն տալ ցանկացած տուժած անձին, մասնավորապես՝ զոհերին, հասնել դատախազի հետապնդումից հրաժարվելու մասին որոշման վերանայմանը: Տարբերակներից մեկը տուժողին գործն անմիջապես դատարան ներկայացնելու հնարավորություն ընձեռելն է:

54. Հետևաբար, այն երկրներում, որտեղ գործում է հայեցողական իրավունքի դատական հետապնդման համակարգը, դատախազը պետք է մանրամասն դիտարկի հետապնդելու կամ դրանից հրաժարվելու հարցը՝ հաշվի առնելով ցանկացած ընդհանուր ուղեցույց կամ չափանիշ, որ ընդունվել է մեղադրանքի որոշումներում հետևողականության հասնելու նպատակով:

55. Դատավարության ժամանակ դատախազների անաչառությունը պետք է հասկանալ այն իմաստով, որ նրանք պետք է գործը հարուցեն արդար և օբյեկտիվ՝ ապահովելու համար, որ դատարանին տրամադրեն բոլոր համապատասխան փաստերը և իրավական հիմնավորումները և, մասնավորապես, ապահովեն, որ բացահայտվեն ի շահ մեղադրողի ապացույցները, պատշաճորեն հաշվի առնվի մեղադրվող անձի ու տուժողի դիրքորոշումները, հավաստիանան, որ բոլոր ապացույցները ձեռք են բերվել այնպիսի միջոցներով, որոնք ընդունելի են դատավորի կողմից՝ արդար դատավարության կանոնների համաձայն և մերժվեն մարդու իրավունքների խախտմամբ, օրինակ՝ խոշտանգումների միջոցով ձեռք բերված ապացույցների օգտագործումը (Հռչակագիր, կետ 6):

56. Դատախազները չպետք է սկսեն կամ շարունակեն դատական հետապնդումը և պետք է կիրառեն բոլոր ջանքերը վարույթը դադարեցնելու համար, երբ օբյեկտիվ քննությունը կամ ապացույցի վերանայումը ցույց է տալիս, որ մեղադրանքն անհիմն է:

57. Ըստ էության, վարույթների ժամանակ դատավորները ու դատախազներն իրենց համապատասխան գործառույթներն իրականացնում են ի շահ արդարացի քրեական դատավարության: Դատավորը վերահսկում է պետական մեղադրողի կամ քննիչների կողմից ստացված ապացույցների օրինականությունը և կարող է արդարացնել մեղադրողին, եթե ապացույցները բավարար չեն կամ ձեռք են բերվել ոչ օրինական ճանապարհով: Պետական մեղադրողը կարող է նաև ունենալ դատարանում բողոքարկելու իրավունք:

գ. Պաշտպանության իրավունքները դատավարության բոլոր մակարդակներում

58. Դատավորները պետք է կիրառեն քրեական դատավարության նորմերը, միևնույն ժամանակ հարգելով պաշտպանության կողմի իրավունքները (պաշտպանյալներին հնարավորություն տալով իրականացնել իրենց իրավունքները, պաշտպանյալներին ծանուցելով իրենց մեղադրանքի մասին և այլն), տուժողների իրավունքները դատավարության ժամանակ, կողմերի հավասարության սկզբունքը և դռնբաց լսման իրավունքը, որպեսզի արդար դատավարությունը երաշխավորված լինի բոլոր գործերում[6] (Հռչակագիր, կետեր 1, 2, 6 և 9):

6 Տես՝ CCJE-ի Կարծիք թիվ 8 (2006թ.), որը վերաբերում է ահաբեկչության համատեքստում իրավունքի գերակայության սկզբունքի ու մարդու իրավունքների պաշտպանության հարցում դատավորների դերին:

59. Մեղադրական եզրակացությունը որոշիչ դեր է կատարում քրեական վարույթում. դրա հանձման պահից է, որ պաշտպանյալները պաշտոնապես ստանում են իրենց դեմ մեղադրանքի փաստացի ու իրավական հիմքի գրավոր ծանուցում (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1989 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը «*Kamasinski v. Austria»* գործով, կետ 79): Քրեական դատավարությունում «արդար լսում» պահանջող Եվրոպական կոնվենցիայի հոդված 6-ի կետ 1-ից բխում է, որ պաշտպանյալները պետք է իրավունք ունենան բացարկելու իրենց դեմ ներկայացված ապացույցը, ինչպես նաև մեղադրանքի իրավական հիմքը:

60. Այն երկրներում, որտեղ պետական մեղադրողները վերահսկում են նախաքննությունը, դատախազը նաև պետք է ապահովի, որպեսզի հարգվեն պաշտպանության իրավունքները: Այն երկրներում, որտեղ նախաաքննությունն իրականացվում է ոստիկանության կամ իրավապահ այլ մարմինների կողմից, դատավորները ներգրավվում են որպես անձնական ազատությունների երաշխավորներ (*habeas corpus*), մասնավորապես, այն վերաբերում է մինչդատական կալանավորմանը, և նրանք պետք է ապահովեն, որ պաշտպանյալի իրավունքները հարգվեն:

61. Շատ երկրներում, սակայն, դատավորը և դատախազը պատասխանատու են դառնում միայն պաշտպանության կողմի իրավունքների իրականացման ուսումնասիրման (մոնիթորինգի) համար, երբ ավարտվում է նախաքննությունը և սկսվում է մեղադրանքի ըստ էության քննությունը: Այս կետում դատախազը, որն ստանում է քննիչի եզրակացությունները և դատավորը, ով քննում է մեղադրանքն ու հավաքված ապացույցները, պետք է ապահովեն, որ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է հանցանքի կատարման մեջ, մասնավորապես, արագ տեղեկացվի այդ մասին, այն լեզվով, որը նա հասկանում է, ինչպես նաև ներկայացած մեղադրանքի բնույթի ու պատճառի մանրամասները:

62. Կախված տվյալ երկրում իրենց ունեցած դերից, դատախազները և դատավորները պետք է այնուհետև ապահովեն, որ անձն ունենա համարժեք ժամանակ և հնարավորություններ իր պաշտպանությանը պատրաստվելու համար, որ նա պատշաճ կերպով պաշտպանված է, անհրաժեշտության դեպքում՝ պետություն կողմից պաշտոնապես նշանակված ու վճարվող փաստաբանի կողմից և կարող է օգտվել թարգմանչի ծառայությունից՝ անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել կատարելու անհրաժեշտ գործողություններ՝ ճշմարտության բացահայտման համար:

63. Գործը առաջին ատյանի դատարան մտնելուց հետո, դատավորի և դատախազի լիազորությունները տարբերվում են՝ ըստ դատավարության ընթացքում իրենց ունեցած դերերի: Ամեն դեպքում, եթե պաշտպանության կողմի իրավունքների հարգանքի բաղադրիչներից որևէ մեկը բացակայում է, ապա կամ դատավորը կամ դատախազը կամ երկուսն էլ՝ կախված կոնկրետ ազգային համակարգից, պետք է ի վիճակի լինեն ուշադրություն դարձնել իրավիճակին ու օբյեկտիվորեն շտկեն այն:

IV. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԻՐՈՒՅԹԻՑ ԴՈՒՐՍ և ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

64. Տարբեր պետություններում դատախազները կարող են իրականացնել կամ չիրականացնել գործառույթներ քրեական իրավունքի տիրույթից դուրս[7]: Այնտեղ, որտեղ դատախազներն ունեն նման խնդիրներ և գործառույթներ, դրանք կարող են ընդգրկվել, ի թիվս այլոց, քաղաքացիական, վարչական, առևտրային/կոմերցիոն, սոցիալական,

7 Տես՝ օրինակ, CCPE-ի Կարծիք թիվ 3, որը վերաբերում է « քրեական իրավունքի տիրույթից դուրս պետական մեղադրողի դերին»:

ընտրական կամ աշխատանքային, ինչպես նաև բնապահպանական, խոցելի խմբերի, հաշմանդամ անձանց և կարիքավոր անձանց սոցիալական իրավունքների բնագավառները: Այս առումով դատախազների դերը նրանց թույլ չպետք է տա օգտագործելու անհարկի ներգործություն՝ դատավորների կողմից վերջնական որոշումների կայացման գործընթացի վրա (Հռչակագիր, կետ 13):

65. Արժե հիշատակել նաև այն դերը, որ ունեն պետական մեղադրողները որոշակի երկրներում բարրագույն դատական ատյանի՝ գերագույն դատարանի առջև: Այս դերը համեմատելի է Եվրոպական Համայնքների դատական մարմնի գլխավոր փաստաբանի դերի հետ: Այս ատյաններում գլխավոր փաստաբանը (կամ համարժեքը) պետության կողմ չէ և չի ներկայացնում պետությունը: Նա անկախ իշխանություն է, որը եզրակացություններ է տալիս բոլոր գործերի կամ որոշակի հետաքրքրություն ներկայացնող գործերի համար, որպեսզի դատարանի համար հստակեցվի դրանցում առաջ քաշված իրավունքի հարցերի բոլոր կողմերը՝ օրենքի ճշգրիտ կիրառումն ապահովելու նպատակով:

66. Իրավունքի գերակայության սկզբունքի համաձայն՝ ժողովրդավարական հասարակությունում պետական մեղադրողների այս բոլոր իրավասությունները, ինչպես նաև այս իրավասությունների կատարման ընթացակարգերը, պետք է ստույգ կերպով սահմանվեն օրենքով: Երբ դատախազները գործում են քրեական իրավունքի դաշտից դուրս, նրանք պետք է հարգեն դատավորի կամ դատարանի բացառիկ իրավասությունը և հաշվի առնեն այն սկզբունքները, որոնք մշակվել են, մասնավորապես, Դատարանի դատական նախադեպերում.

i. Մեղադրանքի կողմի մասնակցությունը դատավարությանը չպետք է ազդի դատարանների անկախության վրա,

ii. Լիազորությունների տարանջատման սկզբունքը պետք է հարգել՝ մի կողմից քրեական իրավունքի տիրույթից դուրս դատախազների խնդիրների ու գործունեության կապակցությամբ, և մյուս կողմից՝ մարդու իրավունքների պաշտպանության հարցում դատարանների դերի կապակցությամբ,

iii. Առանց վնասելու հանրային շահերն իրենց առավելությունը ներկայացնելիս՝ դատախազները պետք է ունենան նույն իրավունքները և պարտավորությունները, ինչ ցանկացած այլ կողմ և չպետք է ունենան արտոնյալ դիրք դատական վարույթներում *(կողմերի հավասարության սկզբունք)*,

iv. Հասարակության անունից հանրային շահերը և անհատների իրավունքները պաշտպանելու դատախազների գործողությունները չպետք է խախտեն դատարանի վերջնական վճռի պարտադիր ուժի սկզբունքը (*res judicata*), որոշ բացառություններով, որոնք սահմանված են համաձայն միջազգային պարտավորությունների, այդ թվում նաև՝ Դատարանի դատական նախադեպերով:

Հռչակագրում նշված այլ սկզբունքները վերաբերում են քրեական իրավունքի տիրույթից դուրս պետական մեղադրողների բոլոր գործառույթներին, անհրաժեշտ փոփոխություններով/mutatis mutandis (Հռչակագիր, կետ 13):

V. ԴԱՏԱՎՈՐՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ (Հռչակագիր, կետ 11)

67. Լրատվամիջոցները կարևոր դեր են կատարում ժողովրդավարական հասարակության մեջ ընդհանրապես և ավելի որոշակի՝ կապված դատական համակարգի հետ: Հասարակության մեջ արդարադատության որակի ընկալման վրա մեծապես ազդում են արդարադատության համակարգի աշխատանքի մասին լրատվամիջոցների հաղորդումները: Հրապարակայնությունը նպաստում է նաև հասնել արդար դատավարության, քանի որ այն պաշտպանում է դատավարության կողմերին և պաշտպանյալներին արդարադատության ոչ թափանցիկ իրականացումից:

68. Հանրության ու լրատվամիջոցների ընդլայնված ուշադրությունը քրեական ու քաղաքացիական վարույթների նկատմամբ, հանգեցրել է նաև թե՛ դատարաններից և թե՛ պետական մեղադրողներից լրատվամիջոցներին տրամադրվող օբյեկտիվ տեղեկատվության անհրաժեշտության բարձրացմանը:

69. Էական կարևորություն ունի ժողովրդավարական հասարակությունում այն, որ դատարանները վստահություն են ներշնչում հանրությանը[8]: Վարույթների հրապարակային բնույթն այն հիմնական միջոցներից մեկն է, որով կարելի է պահպանել դատարանների նկատմամբ վստահությունը:

70. Եվրոպայի խորհրդում այս հարցին անդրադառնում են երկու հիմնական փաստաթուղթ՝ ա) Առաջարկություններ Rec (2003)13 Լրատվամիջոցներում քրեական վարույթների մասին տեղեկատվության տրամադրումը և բ) CCJE-ի Կարծիք թիվ 7-ը՝ Արդարադատության ու հասարակության մասին (2005թ.):

71. Նկատի ունենալով հանրության կողմից ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ լրագրողներին պետք է տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, որպեսզի վերջինները կարողանան հաղորդել և մեկնաբանել դատական համակարգի գործունեությունը, որն քննվող գործերի դեպքում ենթարկվում է դատավորների ու դատախազների պարտավորությունների սահմանափակմանը ներպետական օրենսդրությամբ և Դատարանի նախադեպերով սահմանված կարգով:

72. Լրատվամիջոցները, ինչպես նաև դատավորները և պետական մեղադրողները պետք է հարգեն հիմնարար սկզբունքները, ինչպիսիք են՝ անմեղության կանխավարկածը[9] և արդար դատավարության իրավունքը, շահագրգիռ անձանց մասնավոր կյանքի իրավունքը, գործում ներգրավված դատավորների և պետական մեղադրողների անաչառության և դատարանում հանդես գալու սկզբունքը չխախտելու անհրաժեշտությունը:

73. Լրատվամիջոցներում քննվող գործերի կամ դատավարության մասին հաղորդումները կարող են դառնալ ոտնձգող միջամտություն և առաջացնել անտեղի ազդեցություն ու ճնշում տվյալ գործի համար պատասխանատու դատավորների, երդվյալ ատենակալների և պետական մեղադրողների վրա: Այս մարտահրավերը դիմակայելու համար դատավորներին և պետական մեղադրողներին անհրաժեշտ են մասնագիտական լավ հմտություններ, էթիկայի բարձր չափորոշիչներ և քննվող գործերի վերաբերյալ նախօրոք մեկնաբանություններ անելու խստիվ սահմանափակմանը:

74. Լրատվամիջոցների հարաբերությունների/կապի համար պատասխանատու անձնակազմը, օրինակ՝ հանրային կապերի աշխատակիցները կամ լրատվամիջոցների հետ կապերի համար վերապատրաստված դատավորների կամ դատախազների խումբը,

8 Այս հարցի վերաբերյալ տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Olujic v. Croatia գործը, (Դիմում թիվ 22330/05):

9 Ի թիվս այլոց տես՝ Առաջարկությունների Rec (2003)13 հավելվածի I սկզբունքը և համապատասխան Բացատրական գրությունը:

կարող են օգնել լրատվամիջոցներին ներկայացնելու ստույգ տեղեկատվություն դատարանների աշխատանքի և որոշումների մասին և նաև օգնել դատավորներին ու դատախազներին:

75. Դատավորները և դատախազները պետք է փոխադարձաբար հարգեն արդարադատության համակարգում միմյանց հատուկ դերը: Թե՛ դատավորները և թե՛ դատախազները պետք է պատրաստեն ուղեցույցներ կամ առաջավոր պրակտիկայի/գործելակերպի կանոնագիրք լրատվամիջոցների հետ հարաբերությունների համար՝ յուրաքանչյուր մասնագիտության համար[10]: Էթիկայի մասին որոշ ազգային կանոնագրքեր դատավորներից պահանջում են ձեռնպահ մնալ ընթացիկ գործերի մասին հրապարակային մեկնաբանություններից, որպեսզի չարվեն այնպիսի հայտարարություններ, որոնք կարող են ստիպել հանրությանը կասկածի տակ դնել դատավորների անաչառությունը[11] և խուսափեն խախտել անմեղության կանխավարկածի սկզբունքը: Ամեն դեպքում, դատավորները պետք է իրենց դրսևորեն նախ և առաջ իրենց որոշումների միջոցով, հայեցողությունը և բառերի ընտրությունը կարևոր է այն դեպքերում, երբ դատավորները հայտարարաություններ են կատարում լրատվամիջոցների համար՝ ընթացիկ կամ ըստ օրենքի որոշում կայացված գործերի մասին[12]: Պետական մեղադրողները պետք է ուշադիր լինեն, երբ մեկնաբանում են այն վարույթը, որը քննում է դատավորը կամ կայացրած դատական ակտը, իր անհամաձայնությունը որոշման վերաբերյալ, հնարավորության դեպքում, արտահայտելով այն բողոքարկելու միջոցով:

VI. ԴԱՏԱՎՈՐՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

(Հռչակագիր, կետ 12)

76. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար կարևոր է ուշադրություն դարձնել արդյունավետ միջազգային համագործակցության անհրաժեշտությանը, հատկապես Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների հիմնված այն արժեքների վրա, որոնք զետեղված են համապատասխան միջազգային փաստաթղթերում, մասնավորապես Եվրոպական կոնվենցիայում: Միջազգային համագործակցությունը պետք է կառուցված լինի փոխադարձ վստահության վրա: Միջազգային համագործակցության միջոցով հավաքված և դատավարություններում օգտագործված տեղեկատվությունը պետք է լինի թափանցիկ իր բովանդակությամբ և ծագմամբ, ինչպես նաև մատչելի լինի դատավորների, պետական մեղադրողների ու կողմերի համար: Անհրաժեշտ կլինի կանխել դատական մարմինների միջազգային համագործակցությունն առանց որևէ դատական մոնիթորինգի և առանց համարժեքորեն հաշվի առնելու, մասնավորապես, պաշտպանական կողմի իրավունքներն ու անձնական տվյալների պաշտպանությունը:

10 Առաջարկված է դատավորների ու լրագրողների համար՝ արդարադատության ու հասարակության վերաբերյալ CCJE-ի Կարծիք թիվ 7-ում, կետ 39 (2005թ.):

11 Տես՝ օրինակ, դատավորների էթիկայի ու պարտավորությունների մասին CCJE-ի Կարծիք թիվ 3, կետ 40 (2003թ.):

12 Տես՝ օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Daktaras v. Lithuania (Դիմում թիվ 42095/98) և Olujić v. Croatia գործերը (Դիմում թիվ 22330/05):